ՆՈՐ-ԴԱՐ

№ 168 ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Ուրբաթ, 18 Սեպտեմբերի 1898 Ուրբաթ, 18 Սեպտեմբերի ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 168

Տարեկան՝ 10 ռուբլի, վեց ամիսը 6 ռուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
Թիֆլիսում ամիսը՝ 1 ր., հատով 5 կ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատունը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ"
կամ Tiflis, Rédaction „Nor-Dar"

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին՝ 2 կ., տեղւամների համար՝ կրկնապատիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող. — Մեծ Իշխանի մուտքը Թիֆլիս։
Ինտելիգենցիան ի՞նչ է անում։
Քրոնիկոն.—Լուրեր։
Նամակ խմբագրութեան։
Մամուլի շուրջը։
Թղթակցութիւններ.—Քուշի։
Քաղաքական. — Կրետէի խնդիրը։ Սերբիա։ Բուլղարիա։ Չինաստան։
Հեռագրներ։
Բանասիրական. — Փաթմա։ Սաուերներ։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

ՄԵԾ ԻՇԽԱՆԻ ՄՈՒՏՔԸ ԹԻՖԼԻՍ

Սեպտեմբերի 17-ին պայծառ օր էր, ամբողջ քաղաքը հանդիսաւոր կերպարանք էր ստացել. պալատից մինչև երկաթուղու կայարանը տանող ճանապարհներն ու տները զարդարուած էին դրօշակներով, զորգերով և կանաչով։ Առաւօտեան ժամը 8-ից բազմութիւնը քանի գնում, աւելանում էր։ Զօրահանդէսի համար զօրքերը հաւաքուած էին Դիդուբէի դաշտը. փողոցներում Մուշտայիդի մօտից սկսած մինչև պալատի առաջ, որոշ հեռաւորութեան վրայ շարքով կանգնած էին Թիֆլիսի ամեն տեսակի և ամեն կարգի զոլրոցների աշակերտներն ու աշակերտուհիները իրենց ուսուցիչներով։ Երկաթուղու կայարանի առաջ տեղ էին բռնել Թիֆլիսի համքարներն իրենց դրօշակներով. այնտեղ շարուած և կանգնած էին և քաղաքի ներկայացուցիչները։ Արքայական դահլիճում հաւաքուած էին քաղաքիս զինուորական, դատարանական և վարչական բոլոր բարձր աստիճանաւորները։ Կայարանի շուրջը խոնուած էր ահագին բազմութիւն. տների կըտուրներն անդամ լիքն էին բազմութեամբ, ծառերի ճիւղերի վրայ իսկ մարդիկ էին բարձրացել. ամենքն էլ ուզում էին այնքան սիրած Մեծ Իշխանին տեսնել և բարի գալուստ մաղթել։

Ժամը 9-ից մի երկու վայրկեան անց՝ գնացքը կանգնեց կայարանի մօտ, օդը դղրդաց «ուռա»-ներով։ Մեծ Իշխան Միխայիլն իջաւ վագոնից և մտաւ արքայական սենեակը, ուր ողորմած խօսքերով յայտնեց իր շնորհակալութիւնն իրեն դիմաւորող աստիճանաւորներին և քաղաքի ներկայացուցիչներին և մի փոքր հանգստանալուց յետոյ՝ կառք բազմեց և երկրիս Կառավարչապետ՝ իշխան Գալիցինի ուղեկցութեամբ Մուշտայիդով դիմեց Դիդուբէի դաշտը։ Այդտեղ պատրաստի կանգնած ձին հեծնելով և շրջապատուած զինուորական փառաւոր ուղեկցութեամբ՝ դիտեց զօրքի բոլոր մասերն ու ամենքին խրախուսեց։

Մէկ ժամի չափ զօրքը դիտելուց յետոյ՝ Մեծ Իշխան Միխայիլը հրամայեց, որ զօրքն անցնի Իր առջևից հանդիսաւոր մարշով։ Զինուորական այդ յայտնի հանդէսը այս անդամ շատ լաւ էր և տպաւորութիւնը զեղեցիկ։ Ինչպէս ձիաւոր զօրքերը, այնպէս և ռմբաձիգները կամաց քայլուածքից անցան արագ և սրընթաց քայլուածքի, որ և կատարուեցաւ մեծ յաջողութեամբ։

Զօրահանդիսի աւարտումից յետոյ՝ բոլոր մասերի զօրապետներին և մեծաւորներին շրջապատել տուեց և ամենից առաջ Մեծ Իշխանը մեկնելով իւր ձեռքը իշխ. Գալիցինին՝ յայտնեց իւր գոհունակութիւնն ու շնորհակալութիւնը։ Այնուհետև Մեծ Իշխանը շրջապատուած բոլոր զօրապետներով և բարձր սպաներով՝ ձիով գնաց Դիդուբէ դաշտում պատրաստուած պաւիլիոնը՝ մի փոքր հանգստանալու, ուր և պատրաստուած էր սպաների համար նախաճաշիկ։

Զօրահանդէսը վերջացաւ ժամը 11½-ին։

Այնուհետև Մեծ Իշխանը բարեհաճեց կառք նստել՝ իւր մօտ առնելով երկրիս Կառավարչապետին մտաւ Թիֆլիս շրջապատուած բոլոր զօրապետներով և բազմաթիւ հեծեալ սպաներով։ «Ուռա»-ներին վերջ չկար։ Մեծ Իշխանը ողջունում էր, տեսարանը փառաւոր էր։ Ժամը երկուսի մօտ՝ Մեծ Իշխանի կառքը հասաւ Կառավարչապետի պալատը, ուր և դիշերելու է։

Սեպտեմբերի 1-ից ց31-ն ղեկտեմբերի «Նոր-Դար»-ին բաժանորդ են գրւում եւ վճարում են 4 ռուբ. 50 կոպ.։

ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱՆ Ի՞ՆՉ Է ԱՆՈՒՄ

Մեր մամուլը, շատ անդամ կրկնելով թէ հարկաւոր է ուսումնասիրել մեր երկիրը, հարկաւոր է ուսումնասիրել ժողովրդի կեանքը, հետաքրքրել մեր շրջակայքի ամեն մի մասերի կեանքի մասին, — այդ բոլորը մեր հասարակութեան լուսաւորուած դասակարգի, մեր այսպէս անուանած՝ ինտելիգենցիայի պարտաւորութիւնն է համարել և համարում է։

Բայց ի՞նչ է ցոյց տալիս մեզ կեանքի փորձը. արդեօք կարելի՞ է այդքան յոյս դնել մեր ինտելիգենցիայի վրայ այդ կողմից, այսինքն երկիրը ուսումնասիրելու կողմից.—հարցնենք թէ։ Իրականութիւնը թոյլ է ապացոյցներով հաստատելու այդ։

Օտար երկրներում գոյութիւն ունին ժողովրդական կեանքը հետազօտող կազմակերպուած ընկերութիւններ, կան այնտեղ ստատիստիկական բիւրոներ, որոնք ուսումնասիրում են ժողովրդի կեանքը բազմակողմանի կերպով՝ իրենց գործակալների միջոցով։ Ռուսիայում կան զեմստվոներ, որոնց վրայ պարտք է դրուած ստատիստիկական տեղեկութիւններ հաւաքել, իսկ այդ տեղեկութիւնները պարունակում են իրենց մէջ նաև ժողովրդի տնտեսական, գիւղատնտեսական կեանքի նկարագիրը։ Զեմստվոների այդ հետաքրքրական ժողովածուները հրատարակուած են և կարելի է ձեռք բերել։ Այդ ժողովածուները ներկայացնում են գիւղական ժողովրդի կեանքի ուսումնասիրութեան ամբողջ ծրագրեր։ Մեզանում, հայերի մէջ, կան այժմ բաւական թուով բարձրագոյն դպրոցներում աւարտածներ, մէկը իրաւաբան, միւսը լեզուագէտ, երրորդը բնագէտ և այլն, որոնց անշուշտ յայտնի է, թէ ինչպէս է կատարւում Ռուսիայում ստատիստիկական տեղեկութիւնների հաւաքելը և ինչ փոփոխութիւններով կարելի է մեզանում հաւաքել նոյն տեսակ տեղեկութիւններ։

Մեր գիւղական տարրը պարապում է ըստ մեծի մասին երկրագործութեամբ։ Երկրագործութիւնը—տնտեսական դրութեան բարելաւութեան այդ միանգամայն անհրաժեշտ միջոցը այսօր խիստ կաղում է մեր մէջ։ Երկրագործ ժողովուրդն ապահով և բաղդաւոր կարող է լինել այն ժամանակ, երբ ունի բաւարար հող և տարէցտարի պարարտացնելով այդ հողը՝ տալիս է բաւականաչափ արդիւնք։ Եթէ երկրագործը բաւարար հող չունի, տատա բերք ստանալու և տարահով տպրելու համար՝ պէտք է դիտենայ հողի պարարտացնելու եղանակը, ճանաչէ իւրաքանչիւր բերքի սիրած հողը և ըստ այնմ աշխատէ։

Այժմ հայ գիւղացին նեղւում է և իւր ապրուստը հողից չէ կարողանում ստանալ, ապա 30—40 տարուց յետոյ՝ ապագայ սերունդն ինչպէս պիտի ապրի, չէ՞ որ տարէցտարի ժողովուրդը բազմանում է, կեանքի պահանջներն էլ բարդւում են...։

Բայց պէտք է նկատել, որ հայ գիւղացու նեղ դրութեան, տնտեսական ճգնաժամի հասցնողը՝ բացի հողի սակաւութիւնից, առաւել ևս իրենց գիւղացիների տգիտութիւնն է։

Արդեօք, հայ գիւղացու դժբախտ դրութիւնը մեզ ուշադրութիւն է հրաւիրել մինչև այժմ, ով է լսում նրա ողբալից յուսահատ աղաղակը, ով է մասնակցում նրա սև օրին...

Ի՞նչ հաշիւ է տալիս իրեն մեր նախկին իդէալիստ ազատամիտ անուանուած, բայց բուրժուացած ուսանողութիւնը...

Ո՞րտեղ են բաղդ սրսնում այն անհատները, որոնք Նոյեան ազատնու պէս ձիթենեաց ճիւղ պէտք է տանէին այնտեղ, ուր ծնուել, շնչել են, ուր իրենց հայրերը, ազգակիցները տառապելու չափ շարչարւում են, կարօտ դեկավարների հմուտ ձեռքի...։ Տգիտութիւնը չէ արդեօք, որ մեր գիւղացիք մինչև այժմ չհասկացան նոր սիստեմի երկրագործութեան օգտակարութիւնը, չվերանորոգեցին իրենց անդամալոյծ սայլերը, չկարողացան յարմարուել դարիս պահանջներին. այլ մնացին նոյն խաւար, նոյն փտած սիստեմի գերի։ Տգիտութիւնից չէ՞, որ այսպիսի նեղ ժամանակներում, երբ հողի զգալի պակասութիւն կայ, մեր շինականները չեն միանում և անջուր հողերը պիտանի դարձնում, մինչդեռ կարելի է միացած ուժով կատարել այն, ինչ որ անհատի կարողութիւնից վեր է։ Տգիտութիւնից չէ՞, երբ մեր գիւղացիք

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՓԱԹՄԱ

Միսի կեանքին մէջ, զոր կապրէր դժկամաբար, իր մաքուր հոգին թափուր էր մնացած։

Նուրբ ու պայծառ գեղեցկութեամբ արարած մըն էր այն թրքուհիներէն, որոնց նայուածքին յոգնած քաղցրութիւնն էակները կը թմրէր։ Տանջինը տարեկան, իր շուշան շնորհին բովանդակ լրումին, իր գեղածիլ ծաղիկի մաքուր բոյրերուն մէջ։

Եւ Փաթմա ամուսնացեր էր տարիքոտ մարդու մը հետ, ագեղ փորով, հաստ քիթով, ծիծաղելի փէսով, անագին ու խոշոր։

Իրեն միսերն անախորժ լկանքներու մէջ թաշամեցան ու իրեն ծիծեռնակի զուարթութիւնը մութին մէջ արամութեամբ ցրուող երգի մը պէս գոլորշացաւ։

Ալ ոչինչ, ոչինչ իր հոգն էր. հիմա սպառած էր իր գեղեցկութիւնը, իր դժբաղդութեան միակ պատճառը թերևս. ալ հիմա չունէր այն առողջ ու թարմ հրապոյրը, զոր այնքան պագշռութեամբ քամեց Հիւսէին էֆէնդի։

Ու կըղձար ալ կեանքի մը հանդարտ, ինքնամփոփ ու արտում։

Մարդերը կերևային իրեն ադտոտ արդրուկներ, պատրաստ՝ ասոր-անոր կեանքին մէջ հաճոյքը ծծելու։

Ու քաշուեցաւ սենեակ մը, որ միայն համատարած ծովին կը նայէր։

Ամեն ինչ հոն, ծովին մէջն ալ թափուր էր, ինչպէս իր հոգին թափուր ու ցուրտ։

* * *

Իր պատուհանին առջև ձանձրոյթի երգ մը կ'եղանակէր, երբ յանկարծ սարսուռ մը սողոսկեցաւ իր մէջ։

Փողոցէն անցեր էր սիրուն երիտասարդ մը, գեղանի ու քնքուշ. ու անոր նայուածքին սրտմանքն զգաց ուժովնախ, ցնցիչ, և որ յեսոյ, խռովիչ թմրութեան մը մէջ, շարունակեց ազդել։ Երբ, երկրորդ օրը, միևնոյն բոպէին, սահեցաւ նորէն երիտասարդը Փաթմայի պատուհանին առջևէն, թրքուհին, իր բարախումներուն մէջ, ճանչցաւ զանիկա. իրենց հայ դրացին էր, Վահանը։

Չը գիտցաւ թէ ինչպէս այդ զգացողութիւնն ունեցած էր, բոլորովին տարօրինակ այդ ազդումը, որ խռովիչ ներգործութիւնն է անմեկնելի իղձերու, և որ կ'օրօրէ հոգին անդոհական տարտամութեամբ մը։

Եւ այն ատեն թաքուն զօրութիւններու ծլարձակում մը զգաց իր անծանօթ ներսին իդէալական յափշտակութեան մէջ. զգաց իր մէջ՝ ճառագայթումն անծանօթ արշալոյսի մը, գոյներով, երգերով, լոյսերով պայծառ։

Ու ապրեցաւ ընդ երկար յոյսերու մտերիմ հեշտանքին, անուրջներու մանքուր քաղցրութեան, քերթուածներու տարփական սարսուռներուն մէջ...։

Իր սենեակին մէջ մեկուսացած՝ նորէն ծովուն հետ կապրէր, ծովուն՝ ուր ամեն ինչ թրթռում էր հիմա, ինչպէս իր հոգին ալեծուփ, ալեթրթիռ...։

* * *

Ցանկարծ ադմուկ մը բարձրացաւ։ Ձայները հեռացեալ շատցան, խռովութեան ժլոր մը տարածուեցաւ։ Ի՞նչ կար, ի՞նչ կար։ Կեաւուր-ները կը ջարդուէին։

Խելայեղ, զողզոջուն՝ Փաթմա նեռուեցաւ այն սենեակը, որ փողոցին վրայ կը նայէր։

Հրապարակը՝ լեռան մարդեր մոլեգին, վրէժինդիր, փրփրուն, կը վազվզէին հոս ու հոն, բիբերով զինուած։ Դաժան կատաղութիւն մը կը ցատկէր իրենց բիբերէն ու իրենց զէմքը, թուխ ու ջղուտ, վախ մը կուտար։

Փաթմա զգաց վանգը. ուր կընար ըլլալ հիմա Վահան. իր ձեռքերը քընքուշ կուրծքին վրայ դրաւ, արցունքները յորդաբուղխ հոսեցան աչուընկէն. «Վահանը՞մ, Վահանը՞մ, սէվգիլիս Վահանըմ...»։

Արագ, երիտասարդ մը կը ցատկէ դուռնէ մը, գլուխը բաց, մատմոլոր, դժգոյն՝ ու կըփորձէ փախչիլ։ Դիակներէն վախցաւ, վարանեցաւ, շուարեցաւ։

Բիրի ձայն մը, անմիջական, եռևէն՝ ու խեղճ երիտասարդն ընկաւ արիւններուն մէջ։

Երբ որ Փաթմա ճանչցաւ Վահանը՝ հոն ինկած, անոր գեղեցիկ, սև աչքերը, որ կը նայէին, անոր նուրբ, ճերմակ դէմքը որ անճանաչելի էր, անոր բովանդակ երիտասարդութիւնը որ մասաղ եղաւ, Փաթմա հեծեծանքի մը մէջ նուաղեցաւ...։

* * *

Սակայն հագած՝ նորէն այն սենեակն է ու ծովուն հետ կապրի, ծովուն՝ որ արիւնաշաղախ է սիրամաղձիկ վերջալոյսներուն ներքև, ինչպէս իր հոգին արիւնաշաղախ, արիւնաթաթաւ...։

Աշոտ Աշոտեան.

ՍՏՈՒԵՐՆԵՐ

(Բոլեսլաւ Պրուսից)

Արևի ճառագայթները վառւում են երկնքում, իսկ երկրի վրայ խաւարը տարածել է իւր թևերը։ Խաւարը—այդ մի գիշերային զօրախումբ է, միլիոնաւոր զինուորներով և հազարաւոր անտեսանելի սիներով։ Հզօր զօրախումբը, որ անյիշատակ ժամանակներից ի վեր կռւում է լոյսի հետ, չքանում է իւրաքանչիւր առաւօտ, իսկ երեկոյեան նորից յաղթանակում է, բարձրանում է արևմուտքից մինչև արևի ելքը, իսկ ցերեկը՝ ջախջախուած, թաղնւում է հայեացքներից ադատ ապաստաններում և սպասում է։

Սպասում է լեռների քարանձաւներում և քաղաքի գետնափոր յարկերում, անտառի ծոնակում և լճերի խորքերում։ Սպասում է, ծմակուած դարաւոր այրերում, խորը փոսերում, հորերում, տների անկիւններում, պատերի ճեղքերում. ցրուած, կորչողի նման, այդ խաւարն այնուամենայնիւ լցնում է բոլոր անկիւնները։ Նա կայ նոյն իսկ ծառի կեղևի ամենափոքր բացուածքում, շորերի ծալքերում, գտնւում է և աւաղի ա-

այսօր ճորտ են դառել վաշխառուներին։ Տգիտութիւնից չէ, որ մեր գիւղացիք կոյր յամառութեամբ դիմում են «ֆալ բաց անողին», «գիր բաց անողին» և այլ շատ սիմար մոլութիւնների։ Վերջապէս տգիտութիւնը չէ պատճառը, որ մեր գիւղերում վխտում են «հեքիմներ» և ժողովուրդը ոչխարային միամտութեամբ, կուրօրէն լսում է այդ խաբեայ չարլատաններին։

Բայց մինչև ե՞րբ։ Մինչև ե՞րբ պէտք է մեր ժողովուրդը զոհ գնայ տգիտութեան, խաւարին. մինչև ե՞րբ պէտք է սպասել, որ ժողովուրդը հասկանայ իւր չարն ու բարին։ Այո՛, մեր ժողովուրդը չունի առաջնորդող. ժողովրդի համար գործել ցանկացողը ժողովրդական մարդ պիտի լինի և ոչ թէ կաբինետի մարդ...։ Եթէ դէպի գաւառական կեանքը և դէպի ժողովուրդն ունեցած այդ սէրը կեղծ և վերացական չլինէր, եթէ մեր երիտասարդութիւնը միայն վէպերի մէջ չսիրէր բուն ժողովրդին, այն ժամանակ, անկասկած, գաւառները և գիւղական կեանքն այնքան էլ դժոխային չէին երևիլ նրան...։

Պող. Զաքարեան.

ՔՐՈՆԻԿՈՆ

Երեկ, սեպտեմբերի 17-ին, Նորին Կայսերական Բարձրութիւն Միքայէլ Նիկոլաևիչն Թիֆլիսն ընդունեց արժանավայել կերպով. խիստ փառաւոր էր զօրահանդէսը ուելի ևս փառաւոր էր նրա մուտքը քաղաքը, որը տօնական կերպարանք էր ստացել, բոլոր պետական և ուսումնարանական հաստատութիւնները փակ էին։ Թանկագին Հիւրին երկաթուղու կայարանում դիմաւորելու համար հրաւիրուած էին նաև արհեստաւորների, մեշչանների դասակարգերն իրենց համքարական դրօշակներով։ Մեծ Իշխան Միքայէլ Նիկոլայևիչը հաւանական է, որ այսօր երեկոյեան ժամը 3-ին հեռանայ Թիֆլիսից։

—

«Պետ.-Վեդ.»-ի լրագրում Երևանի նահանգի Զարուրի գաւառի Իսոի-սու կոչուած հանքային ջրերից մի նմանակ կայ տպուած, ուր թղթակիցը Իսոի-սու գիւղը նկարագրելով հանդերձ՝ կարճ նկարագրութիւն է անում նաև, թէ ինչպէս ճանապարհների պահպանների գլխաւոր պ. Սամսոն Տէր-Պողոսեանի նախաձեռնութեամբ այնտեղ հոգեհանգիստ է կատարուել Ազատարար Կայսր՝ Ազէքսանդր II-ի արձանի բացման օրը. այս առթիւ թղթակիցը պատմում է ռուս ժողովրդին, թէ ո՞վ է այդ Սամսոն Տէր-Պողոսեանը և թէ նա ի՞նչ դեր է կատարել ռուս-թրքական պատերազմի ժամանակ Բայազիտի բերդում պաշարուածների (1,500 զօրաց) կեանքն ազատելով։

Երանի՜ թէ բոլոր ռուս թղթակիցներն էլ այսպէս բարեխիղճ կերպով յիշէին հայի արած ծառայութիւնները ռուսաց պետութեան։

—

«Կաւկազ»-ը այս անգամ էլ հեռագիր է ստանում Քութայիսից, որով յայտնում է, թէ սեպտեմբերի 15-ին, այնտեղ հանդիսաւոր մաղթանք կատարուելուց յետոյ՝ սկսուել է ուսումը նախկին հայոց եկեղեցական դպրոցում, 60 աշակերտով։

—

Նոյն լրագիրն հաղորդում է, որ հարց է դրթնել՝ Ալէքսանդրապոլի նոր կառուցուող երկաթուղու կայարանից մի առանձին ճիւղ անցկացնելու դէպի զօրանոցները, որը պատկանում է թնդանօթաձիգների վարչութեան և որտեղ բաւական մեծ քանակութեամբ արդիւնաբերւում է զանազան զէնքերի պաշար։

—

Ռուսաց «Կարմիր Խաչ»-ի ընկերութիւնը կամեցել է օգնութիւն հասցնել Սպանիա-ամերիկական պատերազմի վիրաւորներին, բայց Ամերիկայի կառավարութիւնը շնորհակալութեամբ հրաժարուել է մի որև է նպաստ ստանալուց, որովհետև իւր միջոցները ներում են՝ առանց օտարի օգնութեան՝ իւր հիւանդներին ու վիրաւորուածներին խնամելու։ Սպանիական «Կարմիր Խաչ»-ի ընկերութիւնն յայտնել է, որ իրեն պէտք է օգնութիւն փողով և մթերքով, որի համար և վերջինս ստացել է ռուսաց Մադրիդի դեսպանատան միջոցով 40,000 ֆրանկ։

—

Թիֆլիսումն են ներկայումս Կովկասի քաղաքների նահանգապետները։

—

Թիֆլիսի քաղաքագլուխ պ. Եանդուլեանը վերադառնալով իւր ճանապարհորդութիւնից արդէն իւր գործի գլուխն է անցել և այդ մասին ում անկ է, տեղեկացրել է։ Քաղաքային խորհրդի առաջիկայ նիստը լինելու է երկուշաբթի, սեպտեմբերի 21-ին։

—

Ռուսաց բժիշկ Զչուսեը, որը երկար տարիներ եղել է Հաբեշստանում, ուսումնասիրել է նրանց գեղօրայքը և մօտ 100 տեսակ դեղ է հաւաքել, որոնք կազմուած են գլխաւորապէս արմատներից, տերևներից, պտուղներից, մեղրից, միջատներից հայլն։

—

Սոյն սեպտեմբերի 22-ին լրանում է Աբատարերդի բերդապահ զօրքի հերոսական աղատութեան 50-ամեակը։ Ցայտնի է, որ այդ բերդը պաշարել էին կովկասեան լեռնցիները՝ իրենց գլուխ ունենալով Շամիլին։

—

Գանձակի նահանգի պետական կալուածների վարչութիւնը մի վկայագիր է տուել Ղազախի գաւառի Կողբ գիւղի տէր Մարտիրոսին և Աւետիս Տէր-Յարութիւնեանին, որով նրանք իրաւունք են ստանում 5 տարի ժամանակով աշխատել իրենց գտած և յայտնած երկաթահանքերի վրայ, որոնք գտնւում են Մեծ-Գոյլուխ կոչուած տեղում։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Սրանից 20—25 տարի առաջ, երբ երջանկայիշատակ Գէորգ Դ. կաթողիկոսը, իւր բնական նուրբ հոտառութեամբ զգալով ժամանակի ոգին և նրա պահանջները, մեծ խնամք տարաւ կարգաւորելու և հաստատուն հիմքերի վրայ դնելու մեր եկեղեցական երգեցողութիւնը ձայնագրութեան արհեստի միջոցաւ, այն ժամանակ Ախալցխան էլ, — որտեղ դեռ կենդանի էին մէկ երկու լաւ երգիչներ, որոնց քաղցր ձայնը գրաւում էր ժողովրդեան դէպի եկեղեցի, — ուղարկեց տէր Ղազարոս Պահլաւունուն Ս. Էջմիածին, որպէս զի ձայնագրութեան արհեստը սովորի և գայ բարեկարգէ Ախալցխայի Ս. Փրկիչ եկեղեցու երգեցողութիւնը։ Պիտի խոստովանուենք, որ նա բաւական յաջող կերպով տարաւ իւր գործը սկզբներում, քանի որ դեռ նոր էր ստանձնել իւր պաշտօնը, դեռ երիտասարդ էր, եռանդուն էր։ Բայց արդէն անցել են 25 տարի, նա ծերութեան հասակը մտաւ, եռանդը կորցրեց, մանաւանդ որ այրիացաւ և այժմս էլ հաստատուեցաւ Աբասթումանում իբրև միաբան եկեղեցւոյ։ Չկան առաջուայ սոլո երգիչները, չկայ և խումբ։ Արդէն քանի տարի է, ժողովուրդը սառնութեամբ է վերաբերւում դէպի եկեղեցին, դէպի իւր հոգևոր մխիթարութիւնը։

Ի՞նչ է արդեօք այս երևոյթի պատճառը. մենք չենք կամենում մտնել այդ հարցի բարմակողմանի ուսումնասիրութեան մէջ, որովհետև մեր այժերից բարձր ենք համարում, թերևս հարկաւոր դէպքերում յայտնենք մեր մասնաւոր կարծիքը, միայն թէ ներկայումս կամենում ենք մատնացոյց անել մի երկու հանգամանքի վրայ, որոնք մեր կարծիքով, ամենաազդու և ամենաիրական միջոցներ են ժողովրդին դէպի եկեղեցի գրաւելու ներկայ նիւթապաշտական դարում. ա) խիստ կարգապահութիւն հոգևորականութեան մէջ ամեն մի տեղում և դէպքում և բ) լաւ երգեցողութիւն։ Ա. կէտը թողնում ենք բարձր հոգևոր իշխանութեան վերահսկողութեանը իբրև նրա պարտականութիւն և կը խօսենք միայն Բ. կէտի — երգեցողութեան մասին։

Մենք նպատակ չունինք բացատրելու ընդհանրապէս երգեցողութեան նշանակութիւնը և նրա խաղացած դերը մարդկային կեանքի մէջ, այլ թէ ի՞նչ դրութեան մէջ է ներկայումս Ախալցխայի երգեցողութիւնը և ի՞նչ պէտք է անել։ Արդէն յիշեցինք, որ հայը Պահլաւունին ընդ միշտ Աբասթումանում կըլինի։ Այժմը ուսուցիչ է նշանակուած պ. Պողոս Տ. Կարապետեանը, միևնոյն ժամանակ և խմբապետ, որի համար միայն ամսական 30 ր. է ստանում օրական $1^1/_2$ ժամ պարապելով, իսկ շատ անգամ չի էլ պարապում։ Չենք ուզում ասել, որ միայն խմբապետութեան համար օրական $1^1/_2$ ժամ պարապելու համար 30 ր. ստանալը շատ շատ է Ախալցխայի պէս էժան տեղում, որից կարելի էր 10—15 ռուբլի հանել ուրիշ ուելի հարկաւոր գործի համար, ինչպէս որ ծերունի Տ. Գրիգոր Վանդանեանին ամսական նշանակել, որով նա կարողանար իւր գերդաստանը պահել և ոչ թէ այս ու այն կողմն ընկնել մուրալու և հոգևորականութեան պատիւը վայր ձգելու, այլ թէ ուզում ենք ասել, որ ներկայ ուսուցիչը շատ շատպիտաւ պ. Եկմալեանի քառաձայնը երգել տալու։ Նախ որ ուսուցիչը ոչ մի տեղ չէ սովորած խմբապետութիւն տանել, մինչդեռ դա առաջին պայմանն է, բաւական չէ միայն փողը ինչ ձայնագրութիւն գիտնալը։ Երկրորդ՝ քառաձայն երգեցողութիւնը դեռ ևս խորթ է մեր հասարակութեան համար, ուստի պէտք է շատ զգոյշ վարուել նրա հետ։ Մենք լսել ենք, որ պ. Եկմալեանցը տարիներով զբաղուել է խումբ կազմելու գործով և յետոյ միայն վստահացել երգել տալ։ Բայց ի՞նչ համեմատութիւն պ. Եկմալեանցի, իբրև գործի հեղինակի և պ. Տէր-Կարապետեանցի մէջ։ Ուստի մենք խորհուրդ կըտայինք պ. ուսուցչին՝ լաւ պատրաստել աշակերտներին և յետոյ երգել տալ, թող չ'շտապէ, ոչ ոք պահանջող չկայ, որ անպատճառ քառաձայն լինի։ Իսկ ուելի լաւ կըլինէր մեր կարծիքով, եթէ, ումից որ կախուած է, համաձայնէին ուսուցչին ուղարկելու պ. Եկմալեանցի մօտ, քանի որ նա ընդունակ կըլինի միայն այն ժամանակ խումբ ղեկավարել և թող հաւատացած լինին, որ այն ժամանակ միայն ուելի ժողովուրդ կըգայ, ինչպէս այդ երևում է Թիֆլիսի Վանքի եկեղեցում, և ոչ թէ շարունակ եկեղեցում քարոզի միջոցաւ պախարակել ժողովրդեան, որ եկեղեցի չէ գալիս, և դրանով ժողովուրդին ուելի սառեցնել եկեղեցուց։ Իրական միջոցներից մէկը կարելի էր համարել և քարոզը, բայց ո՞ւր է այն շնորհալի քարոզիչը, որ իւր իմաստալից և գրաւիչ քարոզներով քաշէր ժողովրդեան դէպի եկեղեցի։ Ցայտնի են մեր քարոզիչները...։

Մինաս քահ. Ազնաուրեան.

Ախալցխա, 15 սեպտեմբերի.

ՄԱՄՈՒԼԻ ՇՈՒՐՋԸ

«Գրաւիտ. Վեստ.»-ը, իւր տեղեկութիւնները քաղելով ֆրանսիական մի ամսագրից, պարզ կերպով ցոյց է տալիս, թէ ի՞նչ է նստում Եւրոպայի վրայ զինեալ խաղաղութիւնը։

Պահեստի զօրքերի հետ միասին Ռուսիան պատերազմի դէպքում կարող է հանդէս բերել 9 միլիոն սուին, Ֆրանսիան, ինչպէս և Գերմանեան, մօտաւորապէս $4^1/_2$ միլիոն, Աւստրիան — մօտ 4 միլիոն, Իտալիան — 2,200,000, Անգլիան — 720,000. խաղաղութեան ժամանակ Եւրոպայում

շարունակ զէնքի տակ կայ 4,250,000 հոգի։ Եթէ համաշխարհային պատերազմ ծագի, պատերազմի դաշտը դուրս կըգայ 16,410,000 զինուոր, իսկ պահեստի զօրքերն էլ հետը հաշուած — 34 միլ.։ Եթէ այդ հսկայական զօրաբանակը շարենք մի գծի վրայ չորս կարգ, դրա համար հարկաւոր կըգայ մի տարածութիւն, որ հաւասար կլինի Մադրիդի և Պետերբուրգի միջև եղած տարածութեանը։ Իւրաքանչիւր 1,680 ք. մետրի վրայ կըգար 9 զինուոր և 79 հասարակ բնակիչ։ Իսկ ընդհանրապէս Եւրոպայում մի զինուորի վրայ կըգար 10 բնակիչ կամ 5 տղամարդ։

Իսկ եթէ հաշուենք ամբողջ աշխարհի պետութեանց զինուորների թիւը, կըերևայ, որ երկրագնդիս վրայ շարունակ զէնքի տակ գտնւում է

5,250,000 զինուոր. համաշխարհային պատերազմի դէպքում կարող էին կռուել 44.250,000 հոգի։ Եթէ այդ բազմամիլիոն զօրաբանակը հրաման ստանայ ջնջելու երկրագնդիս մնացած բոլոր բնակիչներին, այն ժամանակ իւրաքանչիւր զինուորին կըմիանկուէր 32 հոգի։ Մի քանի արիւնահեղ կռիւներից յետոյ մարդկային ցեղը կարող էր բոլորովին չքանալ աշխարհիս երեսից։

Ամբողջ աշխարհիս բոլոր զինուորները եթէ մի գծի վրայ կանգնեն, կըկազմեն մի անընդհատ շղթայ հասարակածի շուրջը, որի ժամանակ իւրաքանչիւր զինուորի հրացանը դրուած կըլինէր իւր առաջը կանգնած հարևանի ուսերի վրայ։ Ամենաշատ ինչ կարելի է ասել, որ մարդկային տարածութեան մէջ, երկիւղն ու սարսափը գործութիւնը սկսում են թագաւորել աշխարհի վրայ։

Այդ ժամանակ մայրաքաղաքի դատարկ փողոցներում երևում է մարդկային տարօրինակ կերպարանք, որ ունի իւր գլխի վրայ փոքրիկ մի կրակ։ Նա սալայատակի վրայից արագ վազում է, կարծես յանկարծ նրան հալածելիս լինեն, ամեն մի լապտերի մօտ կանգնում է մի րոպէ և փայլուն կրակն անյետանում է ինչպէս ստուեր։ Դաշտերից են տարածւում դարնանային ծաղիկների բուրմունքը, թէ մռնչում է յուլիսեան որոտումը, աշնանային մրրիկն է քշում փողոցներից փոշիների սիւնը, թէ ձմեռային ձիւնն է հալչում սպիտակացած գետնի վրայ — նա միշտ, հէնց, որ սկսում է մութը, վազում է սալայատակով, վառում է կրակները և անհետանում, ինչպէս ստուեր։

Որտեղից է դուրս գալիս և ո՞ւր է կորչում այդ մարդը, որի երեսը չէ տեսնւում և ձայնը չէ լսւում։ Ո՞ւր են նրա կինը կամ մայրը, որոնք նրա լապտերը դնելով անկիւնում, բարձրանային նրա ծնկների վրայ և փարէին նրա վզով։ Ո՞ւր են նրա բարեկամները, որոնց հետ կարողանար մասնակից անել ուրախութեան ու վշտին, կամ գտնէ ծանօթներ լինէին, որոնց հետ նա կարողանար խօսել առօրեայ պատահարների մասին։

Արդեօք մնի՞ նա տուն, ուր կարելի լինէր տեսնել նրան... Կայ տնուն, որով նրան կարելի լինէր կոչել, կա՞մ արդեօք այնպիսի պահանջներ և զգացմունքներ, որոնք նրան դարձնէին այնպիսի մարդ, որպիսին մենք ենք, թէ խկսպէս դա մի անիւթ, անբան, հանելուկ մի արարած է, որը երևում է մթանը միայն, վառում է կրակները և անհետանում, ինչպէս ստուեր։

«Այո՛, դա մարդ է — ասացին ինձ — և այն էլ հասարակ մարդ, և մինչև անգամ տուին ինձ նրա հասցէն։ Ես գնացի արուած հասցէով և հարցրի դռնապանին.

— «Այստեղ է ապրում այն մարդը, որը փողոցներում լապտերներ է վառում։

— Այստեղ է։

— Այսինքն ո՞րտեղ է։

— Այ, այնտեղ նկուղումն է։

Նկուղի դուռը փակ էր։ Ես նայեցի պատուհանից, պատի մօտ ընկած է անկողինը, իսկ հէնց այդտեղ անկիւնումն էլ լապտերը, որ կախուած էր մի երկար ձողից։ Լապտերավառը տանը չէր։

— Բայց, սիրելիս, ասա, ինդրեմ, նա ի՞նչ մարդ է։

— Է՞հ, ո՞վ գիտէ, պատասխանեց դռնապանը, ուսերը թափ տալով, ես ինքս էլ չգիտեմ — ուրացրեց նա — որովհետև ցերեկը նրան երբէք չես տեսնիլ տանը։

Կէս տարի անցած՝ ես այնտեղ մի անգամ ևս հանդիպեցի։

— Ի՞նչ, լապտերավառը այսօր էլ տանը չէ։

— Էհ, տասց դռնապանը — չկայ և այլ ևս չի էլ լինելու։ Երեկ թաղեցին։ Մեռաւ...։

Դռնապանը մտածմունքի մէջ ընկաւ։ Մի քանի բան էլ հարցնելով, ես ուղեւորուեցի դէպի գերեզմանատուն։

Է՞յ, գերեզմանապահ, սիրելիս, ցոյց տուր ինձ, ո՞ւր թաղեցին երեկ լապտերավառին։

Լապտերավառի՞ն։ — Գրկնեց գերեզմանապահը։ Ո՞վ է ճանաչում նրան։ Երեկ երեսուն մեռեալ կայ....։

— Հա, նրան թաղեցին աղքատների մէջ։

— Ե՛ այդպիսի մեռեալ 25 հատ թաղեցին։

— Այո, նա անշուք դագաղի մէջ էր։

Այստիսով ինձ չյաջողուեց ճանաչել լապտերավառի ոչ անձնուրութիւնը և ոչ էլ իմանալ նրա ազգանունը։

Եւ մինչև անգամ չտեսայ նրա գերեզմանը։ Ու մահից յետոյ նա մնաց այն, ինչ որ էր կենդանութեան մէջոցին. այն տեսակ մի էակ, որին կարելի էր տեսնել խաւար, լուռ ու մռնչ. անըմբռնելի, ինչպէս ստուեր։

Կեանքի խաւարի մէջ, որտեղ մարդկային տարաբաղդ ազգը խաղալիկ դարձած շարժւում է, ուր մի քանիսը յուսահատութեան մէջ են ընկնում չկարողանալով յաղթել արգելքներին, միւսներն ընկնում են դորտեան վիհը և ոչ ոք չգիտէ ուղիղ ճանապարհը, ուր մարդը, կապուած նախապաշարմունքների հետ, ընկնում է՝ զոհ դառնալով դէպքերին կեանքի նեղ շուրջների վրայով պտտում են նոյնպէս և այդպիսի ձևեր։

Իւրաքանչիւրը կրում է իւր գլխի վրայ այդպիսի մի կրակ, ապրելով խաւարի մէջ՝ ամեն մէկը իւր ճանապարհի վրայ տարածում է լոյս, չ'իմանալով իւր աշխատանքի վարձը, — իսկ վերջը... վերջը անհետանում է՝ ինչպէս ստուեր։

Պ. Քաջ.

սին։ Այդ բոլոր հրացանների մի անգամ միայն պարպելը կընտէր 2½ միլիոն ֆրանկ։ Այդպէս կանգնած համաշխարհային զօրաբանակը պիտելու համար հարկաւոր կըլար առանց դադար առնելու ուղևորուել երկաթուղու գնացքով 70 օր և ամեն մի բոպէում տեսնել 2,000 հոգի։

Այդ թուերին յարաբերական են և այն գումարները, որ ծախսւում են զօրքերի պահպանութեան համար։ Այսպէս, Եւրոպայի բոլոր պետութիւնները զօրքի վրայ (նաւատորմիղը չհաշուած) ծախսում են տարեկան 5 միլիոն ֆրանկ. իրաքանչիւր վայրկեան Եւրոպան զինուորական գործի վրայ ծախսում է 137½ ֆրանկ։ Աշխարհիս մնացած մասերի զինուորական կարիքների համար (նաւատորմիղը չհաշուած) ծախսած գումարը հասնում է 1 միլիարդի։ Զինուորների պահպանման ծախքը տարբեր է. ամենից էժան նստում է ռուս զինուորը.

տարեկան նրա վրայ ծախսւում է միայն 772 ֆր. 50 սանտ., գերմանական զինուորի վրայ —1,162 ֆր. 50 սանտ., աւստրիական զինուորի վրայ—1,175 ֆր., իտալական—1,535 ֆր., ֆրանսիական—1,633 ֆր. և անգլիական—2,045 ֆր.։

Իւրաքանչիւր բնակչի վրայ զինուորական ծախք դալիս է՝ Ռուսիայում 6 ֆր., Գերմանիայում—13, Աւստրիայում—մօտ 10, Իտալիայում—մօտ 9, Ֆրանսիայում—մօտ 18 ֆր. 25 սանտ. և Անգլիայում—մօտ 12 ֆր.։

Ահա թէ ինչ հսկայական ծախքեր են լինում այն պատճառով, որ մարդիկ կոտորածներով են նայում իրար վրայ և բաղաքակրթութիւնը դեռ ևս չի ջնջել նրանց մէջ իրար արիւն խմելու վայրենի բնազդը։

Ամենալաւ մտածողները վաղուց արդէն ձգտում էին խաղաղութիւնը հիմնելու ոչ թէ սուրների և թնդանօթների ահարկու ոյժի, այլ արդարութեան սկզբունքների վրայ, որպէսզի միջազգային վէճերի լուծումը պատկանէր միջնորդ դատարանի և ոչնչանար բարբարոսական ժամանակներից մնացած ժառանգութիւնը—այն սխալ ու ողբալի թէորիան, որով մարդկութիւնը ջնջելու կատարելագործուած միջոցները քաղաքակրթութեան արդիւնք են համարւում։

Զինումը սահմանափակելու մասին Նորին Մեծութիւն Նիկոլայ Պ Կայսրի տրած առաջարկը նոր սկզբունքներ է մացնում միջազգային նախկին յարաբերութիւնների մէջ, և պէտք է ցանկալ, որ այդ մեծ, բայց և խիստ դժուարին գործը գլուխ գայ, որպէս զի մարդկութիւնը փոքր ինչ ազատ շունչ քաշի։

* * *

Ցայսմի է, որ գրաֆ Կապնիստը Թուրքայ կառավարութիւնից իրաւունք է խնդրում Փոքր-Ասիայում երկաթուղի գիծ անցկացնելու։ Այդ առթիւ «Նով. Վր.»-ի Կ. Պոլսի թղթակիցն իւր ծրագիրն է տալիս ռուս ձեռներէցներին, եթէ նրանք կամենում են երկաթուղի անցկացնել Փոքր-Ասիայում։ Թիւրքիայում անցկացնելիք ռուսական երկաթուղին պէտք է սկսուի Սև ծովի նաւահանգիստներից մէկից։

Այնտեղ մենք մեր տանն ենք։ Այնտեղ մենք ունինք առևտրական և պատերազմական հաստատուն կենդրոն։ Այդ կենդրոնի վրայ յենուած, մենք կարող էինք ամուր հիմքերի վրայ դնել գործը, զարգացնել մեր առևտուրը Անատոլիայում և ուղիղ հաղորդակցութիւն բանալ Պարսից ծոցի հետ։

Նոյնպիսի ծառայութիւններ կարող են մատուցանել և կովկասեան գծերի շարունակութիւնները, որոնք ծրագրուած են հետևեալ կերպով. 1) Թիֆլիս-Թաւրիզ-Թեհրան-Սպահան-Զիրազ-Արուլեար և 2) Կարս-Էրզրում-Ալասուլ-Դիարբէքիր-Մուսուլ-Բաղդատ-Բասրա։ Այդ գծերի շինութեան տեխնիկական ահագին դժուարութիւնները, նրանց անցնելիք երկրների հետապօտուած չլինելը, երկու կառավարութիւններից (Թուրքայ և պարսից) իրաւունք ստանալու անհրաժեշտութիւնը—այդ բոլորը խնդրի իրականացումը մօտիկ ապագայի գործ չեն ներկայացնում։

Բայց, յամենայն դէպս, կարելի է ասել, որ այդպիսի գծերը միայն իսկական ռուսական գծեր կըլինին և արժանի կըլինէին ռուս անուան։ Դրանք իրապէս կըծառայէին ռուսաց շահերին։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՁՈՒՐՁԻ, 13 սեպտեմբերի.—Նորին Վեհափառութեան ընդունելութեան համար ծախսուել է 3,200 ռուբլի, որից հաւաքուած էր ընդամենը 2,500 ռ.։ Այն կարգադրիչները, որոնք 10 ռուբլի ստորագրելով՝ ամեն օր իրենց ուղած մարդկանց հրաւիրում էին և ամբողջ օրը ուտում-խմում, հէնց որ իմացան թէ հաւաքած փողը չի բաւականանում, անհետ եղան։ Նորերս ժողով արին դրանք, որ պահաւորդը հաւաքեն, բայց հրաւիրուածները չէին գալիս, դժգոհ լինելով, ինչպէս լսում ենք, թէ դրանց արածներից և թէ հնարովի ընարութիւնից։ Դրանից մէկը մինչև անգամ յանդգնել էր մի առաւօտ քանդել տալու այն խաչկալ կամարը, որ շինում էին ընդունելութեան համար, բայց շինողները դիմելով պ. գաւառապետին, սրից նպաստ թոյլատրութիւն էին ստացել, քիչ մնաց թէ պատժել տային և միջնորդները միմիայն յանդիմանութեամբ վերջացրին այս վէճը, որքան տեղեկացանք։ Մի պարսն էլ, ինչպէս երևում է, փող չտալու համար անվայել խօսքեր էր ասել և հարիւր աղաուսել ժողովրդի վրէժխնդրութիւնից։ Պ. Ի. Ժամհարեանցը այդ և նրա նմաններին հակայնելու համար իրենց արածը, տեսնելով նրան եկեղեցում, ասել էր, որ չպէտք է այդ տեսակ վարմունքից յետոյ՝ եկեղեցի գայ։ Վերջապէս տեսնելով, որ ժողովի հրաւիրողները կարողութեան տէր լինելով, մի քանի հարիւր մանէթի համար շարունակ խօսք ու զրոյց պէտք է դարձնեն և վիրաւորեն ժողովրդի բարեպաշտական հիւրասիրութիւնը, հանեց և մնացած 500 ռուբլին ինքը վճարեց։ Այսպիսով մեր հիւրասէր ժողովուրդը մի քանի պարոնների կենսիստորում սարքած ինքնուրոյն ձեռնարկութեան և ինքնագլխութեան շնորհիւ խլրատեց և չմասնակցեց ընդունելութեան գործին։ Նորին Վեհափառութեան ճանապարհածախքն էլ դրանք չհոգացին, շատերը նուէրներ էին պատրաստել եկեղեցու և աղքատների օգտին տալու համար, բայց վշտանալով յետաձգեցին։ Եղան տուողներ էլ, բայց շատ քիչ, որոնց տուածը հաղիւ թէ երեք կամ հինգ հարիւրի հասած լինի։ Ժողովուրդը շատ վշտացած է և գիտէ որ եթէ առաջնորդ լինէր, այսպէս չէր լինիլ և 10—15 մարդիկ չէին կարող այսպէս դասաւորել գործերը և խառնել։

Այս անհրաժեշտ ենք համարում հաղորդել, ինչպէս լսել ենք, որովհետև Թիֆլիսում հրատարակուող ձեզ յայտնի թերթը աւելորդ և մոլորեցնող լուրեր է հաղորդում, այլ և ընթերցողները պէտք է գիտենան, թէ ինչպէս ժողովրդի անունով մարդիկ խօսում, գործում և ժողովրդին արատաւորում են։

Հոգ. գալանցի խումբը մնում է նոյն, ինչպէս Նորին Վեհափառութիւնը քանի տարի առաջ կարգադրել է։ Հրաւիրուել է ձայնագրութեան և խմբական երգեցողութեան համար պ. Եկմալեանցի առաջարկութեամբ ու խորհրդով պ. ձզմաճեանց։ Քնութիւնները և վերաքնութիւնները վերջացել են և կանոնաւոր դասեր սկսում են երեքշաբթի, 15-ին։ Նոր խնդրատուներ եղան անցեալ տարուանից շատ, բայց այս անգամ արժ. հայր տեսուչը թոյլ չտուաւ, որ խառն տարիքներով աշակերտներ ընդունուին, որովհետև ուսումը խանգարւում է և արդիւնք քիչ է լինում։ Բացի այդ, դպրանոցի ծախքն էլ եկամուտից աւելանում է, ինչպէս եղաւ անցեալ հոգաբարձութեան անհոգութեամբ. այս տարի աշխատում է այդ էլ վերացնել, կրճատելով անընդունակ և անպատրաստ աշակերտների թիւը։

Հոգաբարձութեան անդամների, պաշտօնով կամ վաճառականական գործով տեղափոխուելու պատճառով, թիւը հեռագրեհետ պակասել էր, վերջումն էլ երեքը հրաժարուեցան նոյն պատճառով, թէև այլ գոյնով, այժմ մնացել է մի հոգի։ Նորին Վեհափառութիւնը կոնդակով հրամայեց, որ տնտեսական մասը վարեն պ. Բ. Աբրիբէկեանցի հետ երկու անձնավորանորդներ՝ պ. պ. Բ. Թիւնիբէկեան և Ա. Ժամհարեանց։ Ցոյս կայ, որ յիշեալ պարոնները սիրով կարգի կըդնեն խճբճուած գործերը։

Թէ ինչ ատիճանի կարող է հասնել որոշ կարգի մարդկանց եսամտութիւնը և աչքակապութիւնը, որով ամեն գործի մէջ քիչ է մնում թէ կատարեալ իշխան դառնան, երևում է պարզապէս այն հոգաբարձուների թղթից, որոնք հոգաբարձու դառնալու համար ստորագրութիւն տուին անպայման հնազանդուելու հոգևոր բարձրագոյն իշխանութեան հրամաններին և այսօր դրժեցին իրենց խոստման։ Դրանց այդ յանդուգն թղթի մասին կաշխատենք խօսել առանձին և յարգելի խմբագրութեան ուշադրութիւնը դարձնել այդ ապեղ երևոյթի վրայ։

*

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐԵՏԷԻ ԽՆԴԻՐԸ. — Հետաքրքրական է աւստրիական քաղաքական մի գործչի հայեացքն այդ խնդրի մասին, որ, Կանդիայի խռովութիւններից յետոյ, այժմս նորից առաջին գծի վրայ է գրուել։ «Standard»-ի թղթակիցն հետևեալ կերպով է պատմում այդ անձի հետ ունեցած իւր զրուցատրութիւնը։

«Գերմանիան և Աւստրիան, — ասաց այդ անձը,—հեռացան Կրետէից՝ երբ Ռուսիան առաջարկեց, իսկ Անգլիան պաշտպանեց արքայազն Գէորգի թէկնածութիւնը։ Ինչու այդ արքայազնը չնշանակուեց այն ժամանակ, երբ մնացած չորս պետութիւններին զործողութեանց կատարեալ ազատութիւն էր տրուած և հեռացած երկու պետութիւններն այլես արդելք չէին լինում նրանց։ Ինչու Կրետէի համար Կ. Պոլսի դեսպանների մշակած սահմանադրութիւնն խիստ չը-զործադրուեց»։ Սակայն աւստրիական քաղաքագէտն ինքն ևս խոստովանում է, որ այդ բանի զէմ մեծ խոչընդոտներ կային և թէ հենց այդ պատճառով էլ Աւստրիան և Գերմանիան ժամանակին հեռացան, որպէսզի պատասխանատու չլինեն այն անխուսափելի խառնաշփոթութեան համար, որ այժմ տիրում է Կրետէում։ Սուլթանը գուցէ դիջէր էլ, եթէ բոլոր վեց պետութիւնները խնդրի յարմարաւոր լուծում առաջարկէին և եթէ ամբողջ Եւրոպան երաշխաւորէր, որ թուրք զօրքերի ու պաշտօնեաների հեռանալուց յետոյ մահմեդականների կեանքն ու գոյքն ապահով կրմնան. իսկ չորս պետութիւններին նա չի դիջիլ, եթէ նրանք պատերազմ չհրատարակեն, կամ չսպառնան, կամ թէ, գոնէ, պատերազմական դրութիւն չհրատարակեն։ Բայց Անգլիան, միլիոնաւոր մահմեդական հպատակներ ունենալով, չի վստահանալ մասնակցելու այդպիսի գործողութեան։ Ռուսիան կարող է այդ անել, իսկ Անգլիան—ոչ մի դէպքում։ Սուլթանին համարձակութիւն է տալիս նաև չորս պետութիւնների միջև եղած փոխադարձ նախանձը։ Այսպիսի պարագաներում Աւստրիայում կարծում են, որ Կրետէի խնդիրը վերջնականապէս կարելի է լուծել Թիւրքիայի հետ կայացած մի այնպիսի համաձայնութեամբ, որի առաջին պայմանը լինի կղզու մահմեդականների կեանքի ու գոյքի ապահովութեան երաշխաւորութիւնը։ Բայց կղզին իրապէս խաղաղեցնելու և այնտեղ ինքնավար կառավարութիւն սահմանելու համար անհրաժեշտ է 40,000 զօրք ուղարկել Կրետէ, որ չորս պետութիւնները դիւրութեամբ կարող են հաւաքել։ Մինչև որ հաստատուն կառավարութիւն չսահմանուի, կոտորածը կղզում մշտական կըլինի՝ մերթ քրիստոնեաների, մերթ մահմեդականների կողմից։

Այս խօսքերին ի հաստատութիւն, «Polit. Corresp.»-ի Կ. Պոլսի թղթակիցն հաղորդում է, թէ Թուրքաց կառավարութիւնը չի կարող բանակցել չորս ծովակալների, մինչև ոնգամ չորս պետութեանց հետ, այլ կըբանակցի միմիայն ամբողջ Եւրոպայի հետ, որը բաղկացած է վեց մեծ պետութիւններից, և եթէ չորս պետութիւնները որևէ միջոց ձեռք առնեն, Թիւրքիան ապօրինի կըհամարի այդ միջոցը։ Թուրքական զօրքերի հեռացման մասին անելիք պահանջը չի կատարուել։ Թիւրքիան չի կարող չորս պետութիւնների ոյժին դիմադրել, բայց հաւատացած է, որ Կրետէի մահմեդականների՝ ծովակալների վճռին ցոյց տուած պիմադրութիւնն անուշադիր չի թողնուի։

Իրողութիւններն իրենց կողմից հաստատում են աւստրիական քաղաքագէտի կարծիքը։ Կանդիայից հաղորդում են, որ 30,000 հրացանից բաշխուածներն յանձնել են ցարդ 3,000 հատ միայն, իսկ մնացածը, կամ գէթ մեծ մասը վաղուց արդէն թաղել են գետնի տակ կամ պահել են ուրիշ կերպով։

—

ՍԵՐԲԻԱ. — «Mär. L.» լրագիրը Բելգրադի բարձրաստիճան ոպանների շրջանից տեղեկութիւն է ստացել, որ նախկին թագաւոր Միլանի գրութիւնը կրնդիկական է դառնում և նրա չուտափոյթ անկումն անխուսափելի է, եթէ նա սկսական յեղափոխութիւն չձգի։ Ցիշեալ լրագրի ասելով, Միլանն ամեն բոպէ պատրաստ է գահընկեց անելու իւր որդուն և Սերբիայի դիկտատոր հրատարակելու իրեն։

—

ԲՈՒԼՂԱՐԻԱ. — Սոֆիայից հաղորդում են, որ իշխանի պալատում մեծ պատրաստութիւններ են տեսնում Սև Լերան իշխան՝ Նիկոլային ընդունելու համար, որ փոխադարձ այց պիտի տայ Ֆերդինանդ իշխանին։

—

ՉԻՆԱՍՏԱՆ. — Վերջին ժամանակս Եւրոպական մամուլի մէջ տեղեկութիւններ լոյս տեսան մի շարք ռեֆորմների մասին, որ չինայ երիտասարդ կայսրը կամենում էր մտցնել կայսրութեան ներքին վարչութեան մէջ։ Այսպէս, կայսրը մի հրովարտակ էր ուղղել ժողովրդին, որի մէջ մանրամասն խօսում էր ներքին քաղաքականութեան մէջ իւր մտցնելիք փոփոխութիւնների մասին և, ի միջի այլոց, այն կարծիքն էր յայտնում, որ շատ տեսակէտներից արևմտեան քաղաքակրթութիւնը բարձր է Չինաստանում ներկայումս տիրող կարգերից և թէ այդ պատճառով ինքը մտադիր է իրացնել Եւրոպայի քաղաքակրթութեան բարի և լաւ կողմերը, իսկ վատ և վնասակար կողմերը հեռացնել։ Կայսրի մտցնելիք ռեֆորմներից ամենահետաքրքրականը ներկայանում են երեքը։ Կայսրի մի հրամանով պոստ է հիմնւում ամբողջ կայսրութեան համար։ Այդ հաստատութեան առթիւ կայսրը դիմում էր իւր ժողովրդին, խնդրելով, որ նա աջակցի իրեն, որովհետև պոստային հաստատութիւնը պէտք է աւելացնի արքունի գանձարանի եկամուտները։ Միւս հրամանով ամեն չինացու իրաւունք էր տրւում կայսրին զեկուցումներ տալու (այդ իրաւունքը մինչև այդ ժամանակ ունէին միայն բարձրաստիճան պաշտօնեաները)։ Վերջապէս, երրորդ հրամանով կարգադրւում էր, որ կայսրութեան եկամուտների ու ծախքերի հաշիւներն ամեն ամիս հրատարակուին ի գիտութիւն ընդհանրութեան։ Բացի դրանից, մամուլին ազատութիւն էր շնորհւում։ Կայսրը հրամայել էր իւր այդ բոլոր հրովարտակները կոչնել ամբողջ կայսրութեան բոլոր հրապարակներում, որպէս զի ժողովուրդը կարդար։

Սակայն, ինչպէս երևում է հեռագրական վերջին տեղեկութիւններից, բարի ձգտումներով ոգևորուած երիտասարդ կայսրի վերանորոգչական գործունէութեանը վերջ է տրուած։ մայր-կայսրուհին հեռացրել է գործերից իւր որդուն, իրեն վերստին խնամակալ է կարգել և ոճրագործ է հրատարակել կայսրի խորհրդատու Կան-Իմէյին, որը փախել է և որին հրամայուած է բռնել՝ կախաղան բարձրացնելու համար։

ՀԵՌԱԳՐՆԵՐ

ԼՈՆԴՈՆ, 16 սեպտեմբերի.— Երբ Կիչենները հասաւ Փաշոդա, նա տեսաւ, որ այնտեղ ծածանւում է այդ տեղին տիրապետած Մարշանի ֆրանսիական դրօշակը։ Կիչենները զրուցատրութիւն ունեցաւ Մարշանի հետ և հաղորդեց նրան, որ ինքը, իբրև եգիպտական զօրքի գլխաւոր հրամանատար, պարտաւոր է զբաւել Փաշոդան, որը գտնւում է Խրդիւի գերիշխանական իրաւունքների սահմանում։ Թշնամական ոչ մի գործողութիւն տեղի չունեցաւ, բայց Մարշանը վճռապէս հրաժարուեց իջեցնելու ֆրանսական դրօշակը, մինչև որ իւր կառավարութիւնից պատշաճաւոր հրաման ստանայ։ Ուստի այժմս Փաշոդայի վրայ ծածանւում են բրիտանական, ֆրանսական և եգիպտական դրօշակներ։ Կիչենը Փաշոդայում բրիտանական տեղապահ զօրագունդ թողեց և վերադարձաւ Օմդուրման։ Փաշոդայի տիրապետման մասին բանակցութիւններ լինելու են Պարիզում։

ԼՈՆԴՈՆ.—«Daily News»-ի մէջ սկըսուել են լոյս տեսնել մի շարք յօդուածներ «Դրայֆուսի գործի ստատը» խորագրով. գրողը մի մարդ է, որը տեղակ է ամենակարևոր աղբիւրների։ Հեղինակը հետևեալն է ասում Կազիմիր-Պերիէի հրաժարականի մասին։ 1894 թուի դեկտեմբերի կիսին գերմանական դեսպան գրաֆ Միւնստերը կայսրին մի զեկուցում էր ուղարկել Դրայֆուսի գործի մասին։ Այդ զեկուցումը բռնեցին ֆրանսական հողի վրայ և թէև ծրարը փակ թողին, բայց մի յատուկ լոյսի օգնութեամբ (ջրածնի թթուատ) լուսանկարը հանեցին, որից յետոյ՝ նորից դրին պայուսակը։ Զեկուցման բովանդակութիւնը հաղորդուեց ֆրանսական արտաքին գործերի մինիստրութեանը։ Մի քանի օրից յետոյ այդ մասին իմացաւ գերմանական խուզարկու բիւրոն Բրիւսէլում և հաղորդեց Բերլին։ Միւնստերին հրամայուեց անյապաղ յետ պահանջել իւր անցագրերը։ Ուստի նա 1895 թ. յունուարի 1-ին գնաց Ելիսեան պալատը։ Պերիէն բոլորովին ոչինչ չգիտէր, ասաց թէ ինքը ոչ մի կապ չունի կատարուած դէպքի հետ և ամենիւ խօսք տուեց ամեն միջոց գործադնելու, որ այդպիսի բաներ չկրկնուին։ Միւնստերը խոստացաւ աշխատել, որ կայսրը զոհ մնայ այդ բացատրութիւնից և նոյն օրն երեկոյեան կայսրին հաղորդեց իւր Պերիէի հետ ունեցած խօսակցութիւնը։ Այդ զեկուցումն ևս բռնուեց և նրա լուսանկարը հանուեց։ Յունուարի 12-ին Միւնստերը գնաց Ելիսեան պալատը և յայտարարեց, որ Գերմանիան իսկոյն կըհաւաքի իւր զօրքերը, եթէ անմիջապէս գոհացում չտրուի։ Պերիէն խնդրեց նրան կայսրին հաղորդելու, որ ինքն անձամբ գոհացում կըտայ, հրապարակով մերժելով այդպիսի ամօթալի վարմունքները հասարակապետութեան նախագահութիւնից հրաժարուելովը։ Դրանով են բացատրւում նախագահի հրաժարականի յայտարարութեան մէջ եղած հետևեալ խօսքերը. «Հեռանալով պաշտօնից՝ ես սրանով, թերևս, ցոյց տամ, թէ ինչումն է կայանում այն մարդկանց պարտականութիւնը, որոնք պէտք է հոգան Ֆրանսիայի բարի անուան և աշխարհիս մէջ նրա վարկը պահպանելու մասին»։

ՊԵԿԻՆ.—Հրաման է հրատարակուած, որով իրապէս վերացւում են կայսրի

ձեռք առած վերանորոգչական վերջին բոլոր միջոցները։

ՊԱՐԻԶ. — Փոքր նախագահութեամբ տեղի ունեցած մինիստրների խորհրդում Սարրիէնը կարդաց մի նամակ, որի մէջ ընդհանուր պրոկուրորին և վճռաբեկ ատենին առաջարկում է վերքննել Դրայֆուսի գործը։ Սարրիէնը կարդաց նմանապէս մի նամակ, որ ուղղել է պրոկուրորներին զօրքի վրայ եղած յարձակումներին վերջ տալու մասին։

ՏՈՒՐԻՆ.—Այստեղ գումարուած խաղաղութեան կոնգրեսը ցանկութիւն յայտնեց, որ բոլոր կառավարութիւններն ընդունեն զինաթափի մասին Ռուսիայի արած առաջարկը, և հեռագրով Թագաւոր Կայսրին շնորհակալութիւն յայտնեց մեծահոգի ձեռներէցութեան համար։

ՊԱՐԻԶ.—Հասարակապետութեան նախագահը, ի նպատի ունենալով հակասահմանադրական բնաւորութիւնը, հրաժարուեց ընդունել մի պատգամաւորութիւն, որը բերել էր աջակողմեան կուսակցութեան անդամների և ազգայնականների մի վիթխ, որով իրենց 130 համախոհների կողմից յանդիմանութիւն էր կարդացուում մինիսարութեանը և նախագահից պահանջւում էր, որ պարլամենտը գումարի։

Կ. ՊՈԼԻՍ.—Ռուսական, ֆրանսիական, անգլիական և իտալական կառավարութիւնները որոշեցին Դրանն առաջարկել՝ իւր զօրքերը Կրետէից հեռացնելու, պարտաւորուելով պաշտպանել Կրետէում ապրող մահմեդականներին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Ժանտախտի զէմ կռուող յանձնաժողովից. Հոդկաստանից ստացուած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ ժանտախտի համաճարակը Բոմբէյի նահանգում շարունակում է սաստկանալ. յուլիսի 4-ից մինչև 10-ը հիւանդացել է 433, մեռել է 307 հոգի. օգոստոսի 27-ից մինչև սեպտ. 2-ը հիւանդացել է 3,112, մեռել է 2,238 հոգի։ Բոմբէյում սեպտ. 3-ից մինչև 12-ը հիւանդացել է 205, մեռել է 173 հոգի. Կալկաթայում 7 հոգի հիւանդացել և 7 հոգի մեռել են։

Խմբագիր-հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մարդատար գնացքը № 1 Բազուից Թիֆլիս մեկնում է օրուայ 4 ժ. 50 ր. հասնում է *Թիֆլիս* առ. 8 ժ. 26 ր., մեկնում է *Թիֆլիսից Բաթում* առ. 9 ժ. 10 ր., հասնում է Բաթում երբ. 8 9. 47 ր.

Փոստային գնացքը № 3 Բազուից, Թիֆլիս մեկնում է վաղ. 12 ժ. 20 ր., հասնում է *Թիֆլիս* երբ. 6 ժ. 33 ր., մեկնում է *Թիֆլիսից Բաթում* երբ. 7 ժ. 48 ր., հասնում է Բաթում առ. 8 ժ. 33 ր.

Մարդատար գնացքը № 2 մեկնում է Բաթումից Թիֆլիս առ. 8. ժ. 20 ր., հասնում է *Թիֆլիս* և 8 ժ. 22 ր., մեկնում է *Թիֆլիսից Բազու* երբ. 9 ժ. 05 ր., հասնում է Բազու օրուայ 3 ժամին։

Փոստային գնացքը № 4 մեկնում է Բաթումից Թիֆլիս երբ. 8 ժ. 35 ր., հասնում է *Թիֆլիս* առ. 9 ժ. 07 ր., մեկնում է *Թիֆլիսից Բազու* առ. 10 ժ. 57 ր., հասնում է Բազու առ. 5 ժ. 45 ր. ուղէին։

—

ՌԱՋՄԱՎԻՐԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ

1898 թ. մայիսի 1-ից մինչև 1898 թ. նոյեմ. 1

Թիֆլիսից 1-ին հինգ տեղ ունեցող կառքը մեկնում է առ. 9 ժ. 30 ր. վիշերուս է Մլէթում և հասնում է Վլադիկաւկազ միւս օրը երբ. 7 ժ. 20 ր.։ II-ը մեկնում է առաւօտեան 11 ժամին և վիշերում է Պասանաուրում. հասնում է Վլադիկաւկազ միւս օրը երբ. 9 ժ. 20 ր.։

Վեց տեղ ունեցող I-ին հանրակառք (առանց գիշերելու) մեկնում է օրուայ 2 ժ. 30 ր. և հասնում է Վլադիկաւկազ միւս օրը երբ. 4 ժ. 35 ր. II-ը մեկնում է երբ. 9 ժ., առանց գիշերելու, հասնում է Վլադիկաւկազ միւս օր երբ 11 ժ. 20 ր.։

Վլադիկաւկազից հինգ տեղ ունեցող I կառքը մեկնում է առ. 7 ժ. գիշերում է Մլեթում և հասնում է Թիֆլիս միւս օրը երբ. 6 ժ. 30 ր.։ II-ը մեկնում է առ. 9. 30 ր. գիշերում է Գոռոդաուրում և հասնում է Թիֆլիս միւս օրը 7 ժ. 55 ր.։

Վեց տեղ ունեցող I-ին հանրակառք (առանց գիշերելու) մեկնում է երբ. 5 ժ. 30 ր. և հասնում է Թիֆլիս միւս օր, երբ. 7 ժ. 25 ր.։ II-ը մեկնում է երբ. 9 ժ. և առանց գիշերելու հասնում է Թիֆլիս միւս օրը երբ. 10 ժ. 55 ր.։

—

ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԴՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՎ

(Սոլոլակ, Սաղովայա փողոց, № 64)

(սեպհական տուն)

Հեռախօս № 230

Երկեակ հիւանդների ընդհանուր ընդունելութիւնն երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը՝ ժամը 2—4-ը ցերեկը. վճարը հիւանդների կարողութեան համեմատ, մասնաւոր ընդունելութիւն՝ ամենայն օր՝ ժամը 8—10 առաւօտեան—վճարը 2 ր.։ Դիշերօթիկ հիւանդները և ծննդաբերը կանայք ընդունւում են գիշերուայ և օրուայ ամեն ժամանակ, բայց այդ մասին առաջուց տեղեկութիւն պիտի տրուի. վճարը որոշւում է ըստ դասակարգերի։ Զունեցողները ձրի են։ Գինեկոլոգիայի բաժանմունք ընդունողները վճարում են 1 ր 50 կ. մինչև 8 ր. մի օրուգիշերուայ համար. ծննդաբերական բաժանմունքը մանողները—1 ր. մինչև 5 ր. մի օրուգիշերուայ համար։ Երկունքի ապատելը 10 ր. մինչև 50 ր.։ Անդամատուութիւնը ըստ համաձայնութեան։ Երկեակ բոլոր հիւանդները դեղերը և նիւթերը ստանում են ընդունելութեան ժամանակ ձրի։ Զունեցողների համար 1-ական մահճակալ է դրուած իւրաքանչիւր բաժանմունքում, ուր տեղաւորւում են նրանք տեսչի և նրա պ. պ. ընկերների առաջարկութեամբ ձրի։

Հիւանդանոցի տէր և տեսուչ
Մ. ՄԿՐՏՉԵԱՆ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(M.) 51824 21—9

Լոյս տեսաւ
ԼԵՒՈՆ ԽԱՆ-ԱՂԵԱՆԻ
ԳԻՒՂԱՏՆՏԵՍՄԱՆ ԳՐՔԻՐՔՆԵՐ
ԵՒ
ՄԵՐԵՆԱՆՆԵՐ
բացատրական բառարանով և 250 նկարով։
Հրատարակութիւն Թիֆլիսի հայոց հրատարակչական ընկերութեան.
ԳԻՆԸ 50 ԿՈՊԵԿ։
Դիմել՝ Тифлисъ, Общество изданія армянскихъ книгъ.
(1004) 50—41

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՈՆ
փոքրահասակների համար
ՏԷՐ-ՅՈՎՍԷՓԵԱՆԻ
(Սոլոլակ, Սաղովայա փող., տ. № 46)։ Քաջրահասակ երեխաների ընդունելութիւնը սեպտեմբերի 15 ից։
(1094) 5—2

(M) 3—2

ԼՈՅՍ ՏԵՍԱԼ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱԼԽԱՍԵԱՆԻ
„ՀՈՐՈՏ-ՄՈՐՈՏ"
(պատկերներ իրական կեանքից)
ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔԸ։
ԳԻՆՆ Է 30 Կ.։
Դիմել Կենդրոնական և Կովկասեան գրավաճառանոցները և իրեն հեղինակին։ 10 2

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՈՆ
Մ. ՊԵՏՐՈՍԵԱՆԻ
տեղափոխուեց Կիրէևի տուն, Պոլիցէյսկայա փողոց, ԲԱԴՈՒ։ Ընդունելութիւնը կըսկսուի սեպտեմբերի 1-ից։ Մանկական պարտէզի, ուսումնարանի և պանսիոնի մանրամասն ծրագիրը (և նպատակը) կարելի է ստանալ օգոստոսի 27-ից։
(1092) 10—10

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Լոյս տեսաւ
ՄԱՐԴ ԵՄ
(HOMO SUM)
ՎԷՊ
Գերմաներէն բնագրից թարգմանեց
ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆՑ
428 երես, ԳԻՆՆ Է 1 ՌՈՒԲԼԻ
Դիմել՝ Армянское Издательское Общество въ Тифлисѣ.
(1067) 50—15

Լոյս տեսաւ
«ՍԿԶԲՈՒՆՔ ՔՐԻՍՏՈՆԷԿԱՆ ՈՒՂԱՓԱՌ ՀԱՒԱՏՈՅ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ»
գաստառները։
Պետական սկզբնական և միջնակարգ դպրոցների ստորին դասարանների համար կազմեց
Պետրոս քահանայ Տէր-Յովհաննիսեանց։
Երկրորդ տարի 25 կոպ.
Երրորդ » 30 կոպ.
Մամուլի տակ են և միւս տարիների դրքոյկները։
Գրավաճառներին 20% զեղչ։
Դիմել՝ Шушу, въ книжную торговлю Б. Теръ-Саакянцъ.
(1097) 3 2

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Լոյս է տեսել «**ՔՆԱՐԻԿ ՄԱՆԿԱԿԱՆ**» եւրոպական ձայնագրութեամբ, որ յարմարեցրած է դաշնամուրի վրայ նուագելու և երգելու համար։ «Քնարիկը» պարունակում է իւր մէջ 27 հատ մանկական ընտիր երգեր, պարերգեր և աղօթքներ, որ Ս. Էջմիածնի նախկին ուսումնական ժողովի կողմից ընդունուած է ի շարս լաւագոյն դասագրքերի։ Աբրահամեանի հայ դաշտաւորների խորին ուշադրութիւնն ենք հրաւիրում այս դիւրամատչելի եղանակով կազմուած երգարանի վրայ, որ վաճառւում է Թիֆլիսի «Կենդրոնական դրավաճառանոցում», պ. Յովհ. Սուլթանեանի երաժշտ. մագազինում և ինձ մօտ։ Ինչ դիմողները բացի մեծ զիջումից, նաև ճանապարհածախք չեն վճարում։ Հատով՝ 1 ռ. 50 կոպ., 50 օր. 1 ռ. 20 կոպ., 100-ով գնողներին՝ 1 ռ.։ Յանկացողները պիտի դիմեն այս հասցէով՝ «Սիմֆերոպոլ Դպրոց քահ. Յովսէփեանց»։ (1038) 50—340

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
ՏԵՍՆԵՒ ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԵՐԻ

Առևտրական Կուրսերի Նպատակն է մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հա շուտպահներ։ Աւարտողներին տասնում են ատեստատներ։

Աւանդի առարկաները սրանք են.—1) Առևտրական Տնտեսութիւն, 2) Առևտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրայ, 5) Առևտրական թղթակցութիւն 6) Առևտրական և մուրհակի կանոնագրութիւն և 7) Գեղագրութիւն, (վառ ձեռքի—почеркъ—ուղղելը)։

Ուսումն սկսուելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնները, սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում՝ Սոլոլակում, Ալէքսանդր Քրիդոնովի տանը, № 9, Սերգիևսկայա և Նադընայա փողոցների անկիւնում։ Ծրագիրն ու կանոնները կարելի է ստանալ **ԶՐԻԱՊԷՍ** եղբ. Յովհաննիսեանների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիները դիմում են կուրսեր հիմնողին.—въ Тифлисъ, С. П. Мануэльянцу.
(1053) 25—24.

ՆՈՐ ՈՍԿՈՒ

ամենաշքեղ. ամենադիմացկուն, ամենաճիշտ և խիստ էժան

!!! ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐ !!!

Ռեմոնտուարը իսկական Ժընեի, կազմը խիստ շքեղ, Պալիսի իսկական էմալյով, վառ ֆիգուրներ։

ԲԱՑ ժամացոյցն արժէ 6 ռուբ., ՓԱԿԸ՝ 7 ր. 50 կ.։

Ուղարկում է փոխանակուած և մինչև բոպէներն ուղղուած, 5 տարուայ երաշխաւորութեամբ՝

ПАРИЖСКІЙ ЛУВРЪ
въ ВАРШАВѢ, Королевская, 51.

Երկու բարի կանխավճար ստանալուց յետոյ, մնացածը վերադիր վճարով։
ՆՈՐ ՈՍԿՈՒ ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐ ՊԱՐԻԶԻ ԻՍԿԱԿԱՆ ԷՄԱՅԼԻ ՖԻԳՈՒՐՆԵՐՈՎ։
(M.) 93848 10 7

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԴՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ ՎԱՃԱՌՈՒՄ Է
ՆՈՐ ԳԻՐՔ՝
„Братская помощь пострад. въ Турціи армянамъ"
(«ԿԼՐԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՎՆԱՍՈՒԱԾ ՀԱՅԵՐԻՆ»)
ԳՐԱԿԱՆ-ԳԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ
2-ՐԴ ՆՈՐԻՑ ՄՇԱԿՈՒԱԾ ԵՒ ԼՐԱՑԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ։

Այս էժանացրած հրատարակութեան մէջ, որ պարունակում է գանազան բովանդակութեամբ չափարերական և արձակ 140-ից աւելի յօդուածներ, մտել է 40 ից աւելի նոր յօդուած, որոնք ծանօթացնում են մի կողմից Թրքահայերի սարսափելի թշուառութիւնների, իսկ միւս կողմից—հայերի յեղական և կուլտուրական կեանքի պայմանների հետ անցեալում և ներկայում։

Գրքին կցուած են հայ-դաղթականների բնականից հանուած երկու առանձին մեծ իմաստական պատկերներ (աւելի քան 100 հոգի), այլ և 150-ից աւելի նկարներ (40-ը նոր), դրանց թւում շատերը գունաւոր նկարով և երկուսը - Յ. Կ. Այվազովսկու «Հայերի կոտորածը Տրապիզոնում 1895 թ.» և Մանտեսեանի «Գարնանային փոթորիկ» երեք տեսով։

ԳԻՆԸ 3 Ր., ՃԱՆԱՊԱՐՀ ԾԱԽՔՈՎ 3 Ր. 70 Կ.

Պահեստը «Русскія Вѣдомости» լրագրի գրասենեակում և Կարրասանիկովի գրավաճառանոցում (Москва на Моховой)։

NB. Այն անձերը, որ «Братская помощь»-ի 1-ին հրատարակութեան հաշիները չեն վերջացրել, բարեհաճում են շատպել վերջացնելու։

Այս ժողովածուի նպատակը համակրող հրատարակութիւններին խնդրարարաբար խնդրւում է տարածել այս յաջտարարութիւնը։

Խմբ. Գր. Ջանշեան
5—4

Дозв. цензурою. Тифлисъ, сентября 17 го дня, 1898 г. Տպարան Ա. Ի. Պետրովի Типографія А. И. Петрова, Голов. проспектъ, домъ № 12 Телефонъ № 387.